

**ՄԵՂԸԸ
ՀՐԱԺԱՐԻՄՔ ԶՂՋՈՒՄ
«Մեղայ Ամենասուրբ
Երրորդութիւն»**

ՄԵՂԱՅ

**Այլ եւ մեղանչեցի եօթը մահացու
մեղքերով՝ հպարտութեամբ, նախան-
ձով, բարկութեամբ, ծուլութեամբ,
ազահութեամբ, որկրամոլութեան,
բղջախոհութեամբ եւ ասոնց տարա-
տեսակներով:**

Ծոմապահութեամբ, այսինքն՝ ա-
ռանց որեւէ ջանք թափելու, մարդը կա-
րող չէ փրկուիլ: Միայն հաւատով չէ, որ
մարդ պիտի արդարանայ, այլեւ գործած
առաքինութիւններով, «Հաւատքն ա-
ռանց գործի մեռած է» (Յկր. բ:20) եւ
հաւատքն է, որ կը ստիպէ մեզի գործել,
գործել մեր ներսէն՝ հոգալով մեր հոգիի
մաքրութեան մասին, եւ թէ մեզմէ դուրս՝
եղբայրասիրութեան ու ողորմութեան
բարի գործեր կատարելով:

Ծուլութենէն կը ծնի ձանձրոյթ, քնկո-
տութիւն, դատարկակեցութիւն, շատա-
խօսութիւն ու բամբասանքներ, հեշտա-
սիրութիւն, աղօթելու եկեղեցի յանախե-
լու, Աստուածաշունչի ընթերցման մէջ
թուլացում, ուսման եւ այլ պարտակա-
նութիւններու մէջ կաղալ (Ով չ'աշխա-
տիր թող չուտէ նաեւ... աշխատանքով
օրինակ դառնալ, տես՝ (Բ. Թեապ. 3/10-
15), (Բ. Թեապ 3/7-9): Ուրեմն՝ ծուլութեան
հակադիր առաքինութիւնը աշխատասի-
րութիւնն է:

Պողոս առաքեալ... **Շարունակելի**

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax: 01-258300- [facebook-ի էջ jerak ճրագ քերթ](#)

**Մենք Աստուծոյ տաճար
ենք**

«Չէ՞ք գիտեր, թէ Աստուծոյ տա-
ճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին կը
բնակի ձեր մէջ» (Ա.Կր 3.16): Որ-
քա՛ն կը տրտմի Աստուած, երբ իր
Հոգիին բնակութեան համար ստեղ-
ծուած մարդուն սիրտը՝ աշխարհի
հոգիով ու հոգեբով բնակուած կը
տեսնէ: Որքան տարբերութիւն կայ
գարշահոտ ցեխով լեցուած բա-
ժակին եւ բուրեան միտոնով լեցուած
բաժակին միջեւ, նոյնքան եւ աւելի
տարբերութիւն կայ, Աստուծոյ
Հոգիով եւ աշխարհի հոգիով
բնակուած մարդոց միջեւ: Սիրելի՛
բարեկամ, դուն ինչո՞վ լեցուցած ես
սիրտդ, Յիսուսի սիրո՞վ, թէ՛ աշ-
խարհի սիրով, եղեմական վար-
դերո՞վ, թէ՛ աշխարհի փուշերով: Ո՞վ
ես դուն, տաճա՞ր մըն ես ուր
Աստուած կը պաշտուի, թէ՛ բազին
մը ուր չար ոգիներ կը ծափա-
հարուին:

ՇԱԲԹՈՒԱՆ ՏՕՆԱՅՈՅՅԸ

❖ **Շր. 5 Մարտ Սրբոց Մանկանց
Քառասնից որք ի Մեքաստիա
կատարեցին**

**Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ա-
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-
վորդին, եկեղեցիներու բանկային
մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտ-
ռել «Jerak, Կամ ՃՐԱԳ», ապա
սեղմել «Like»ը, կարդալու կամ
անդամագրուելու համար:**



ՃՐԱԳ

ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս. 119-105)

Թ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 28 ՓԵՏՐՈՒԱՐ, 2016

ԹԻԻ 9

Դ. Քառասնորդաց: ՏՆՏԵՍԻ

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 56.1-57.21: Եփ. 4.17-5.14: Դկ. 16.1-31**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԿԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
16.1-13**

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց. --

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը
ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով՝ թէ իր տիրոջ
հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ եմ փու
մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր:
Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ
ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը գրկէ: Բանուորութիւն չեմ կրնար
ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ, թէ ի՞նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս
տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ՝ մարդիկ զիս ընդունին իրենց տուններէն ներս»: Ապա,
մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց.
«Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէթ»: Տնտեսը
ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ
հարցուց միւսին. «Դուն որքա՞ն պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս
հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ
գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր
հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը
վարելու մէջ աւելի նարպիկ են քան՝ լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի. -- Աշխարհիկ
հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք,
որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտեանական յարկերու մէջ ընդունին:

Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով
որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաւատարիմ է:
Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք,
նշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք
աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՞ս կ'ուզէք որ Աստուած ձեզի տայ ձեզի
սպասող նշմարիտ հարստութիւնը:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏՆԵՑԻ

Մականունը՝ Կախիկ, ծնած է Սիւն-
եաց Ծղուկ գաւառի Վաղադն գիւղին
մէջ, 1315-ին: Աշակերտած է Գլաձորի
համալսարանին մէջ Տիրատուր վարդա-
պետին, որուն մահէն ետք փոխադրուած
է Որոտանի վանքը, հոն ստանալով
Որոտնեցի մականունը: Ան ծանօթ է իբր
մեծ աստուածաբան, իմաստասէր, մա-
տենագիր եւ ուսուցչապետ: Հիմնած է
Տաթևի համալսարանը եւ Ապրակու-
նիսի բարձրորակ վանական դպրոցը,
որոնք դարձած են աստուածաբանական
եւ փիլիսոփայական կարեւորագոյն
կեդրոններ: Պայքար մղած է Հայաս-
տանեայց եկեղեցւոյ լատինացման
շարժումին դէմ: Ան ժառանգ թողած իր
աշխատութիւններուն մէջ արծարծած է
հայ եկեղեցւոյ արարչութեան, եկեղե-
ցաբանութեան, հրեշտակաբանութեան
հարցեր եւ մանաւանդ մարդկային
հոգիի մասին խորհրդածութիւններ:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ

Յովհաննէս Որոտնեցիի նշանաւոր
աշակերտներէն՝ աստուածաբան, փի-
լիսոփայ եւ մանկավարժ: Իր ժամանա-
կակիցներուն կողմէ անուանուած է
«Ներկրորդ Լուսաւորիչ», «Նոսմեծ Վար-
դապետ», «Վարժապետ Հայոց»: Իր կա-
րեւորագոյն գործերէն է «Գիրք հարց-
մանց»ը որ աստուածաբանութեան
գործնական գիրք մըն է: Իր հմայքը
այնքան մեծ եղած է՝ որ իր այցելած
վանքերուն մէջ աւելցած է ուսանող-
ներուն թիւը:

ՀԱՐՅՈՒՄ - ՊԱՏԱՍԽԱՆ

Ինչո՞ւ Աստուծոյ ողորմութիւնն ու գթութիւնը խնդրելու համար հաւատացեալներուն կը թելադրուի ծոմապահութեամբ աղօթել:

Որովհետեւ ծոմապահութիւնը խո-
նարհութեան, հեգութեան, անձնուի-
րութեան եւ եսի ունայնացման արարք
մըն է, գոր ենթական պէտք է գործով
ցոյց տայ իր Արարիչին՝ հրաժարելով
աշխարհի բոլոր ցանկութիւններէն եւ
անոնց առթած հանդիմանքէն ու վայել-
քներէն՝ արժանանալու համար Աստու-
ծոյ սիրոյն: Ծոմ պահողը իր սրտին
ամբողջական սէրը արտայայտած կ'ըլ-
լայ Աստուծոյ հանդէպ՝ հրաժարելով
իր մարմնոյն կենսական եղող հացէն ու
ջուրէն: Ան իր հաւատքն ու համո-
զումը յայտնած կ'ըլլայ Աստուծոյ
խօսքին՝ թէ «Ոչ միայն հացով կ'ապրի
մարդ, հապա այն ամէն խօսքով՝ որ
Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

Ծոմապահութեան կամ պահքի հետ
համընթաց կատարուելու են աղօթք եւ
ողորմութիւն: Յոյժ թելադրելու է, որ
հաւատացեալներ ծոմապահութեան
կամ պահքին պատճառով ծախսերէն
կրճատուած գումարները յատկացնեն
աղքատներու կամ բարի նպատակնե-
րու:

ԱՌԱԿ. ԳԼՈՒԽ ԺԵ 10

Բարի մարդուն խրատը ընդունելի
է հարազատներուն համար, իսկ անոնք
որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝
վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելի եղբայրներ, ամէն մարդ
թող արագ ըլլայ լսելու եւ ծանր՝
խօսելու եւ բարկանալու մէջ, ո-
րովհետեւ մարդուն բարկութիւնը
Աստուծոյ արդարութիւնը կը հե-
ռացնէ: Յակ. Ա. 16-20

Սիրելիներ, նանչնալէ ետք բարկու-
թեան չարիքները եւ մանաւանդ գիտ-
նալէ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պի-
տի գրկուիմք երբ Աստուծոյ արդարու-
թեանէն բաժնուիմք, գգոյշ ըլլանք մեր
անձերուն նկատմամբ ու հեռանալէ
բարկութեանէն եւ անոր չարութեանէն,
ինչպէս կատարի գագանէ մը: Զըլլայ թէ
իժի պէս մեր մէջ բոյն դնելով վնասէ
մեր հոգիներուն, խայթէ մեր կրունկը
եւ հեծեալը գետին ձգէ: Նքէ Աստուծոյ
այլ դատաստանները վրէժխնդրութեան
բարկացողներուն չէին, գէթ մարդոցմէ
պէտք էր շառագունիլ ու դողալ, եւ ոչ
թէ գագանի նման անընտելի եւ վայ-
րենի՝ բոլոր տեսողներուն ծաղրանքի
առարկայ ըլլալ: Օձերու եւ կարիներու
բնութիւնն է միշտ գագանութեան մէջ
մնալ, որոնք որոնք մօտենան կը գար-
նեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառա-
բոլորին ատելի են եւ ամէն ոք իր ձեռքը
կը զինէ գանձմէ սպաննելու: Անոնց մի
նմանիք դուն, որ բանաւոր եւ իմաս-
տուն ես: Անոնք բնութեամբ ունին գա-
գանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով
Արարիչէն. սակայն դուն նոյնպէս չս-
տեղծուեցար, այլ՝ իմաստուն, հեզ եւ
հանդարտ: Ինչո՞ւ համար բնութեանէն
դուրս գալով կամովին կը նմանիս ա-
նոնց գագանութեան:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՂՕԹՔ ՅԱԶՈՂՈՒԹԵՆԷ ՄԸ ԵՏՔ

Բարերար Աստուած, միայն դուն
ես որ զիս քու բարիքներովդ կ'ողողես:

Կ'օրհնաբանեմ քեզ եւ շնորհակա-
լութիւն կը յայտնեմ այն բոլոր բարիք-
ներուն համար՝ որ առատօրէն անար-
ժանիս կը պարգեւես քու սիրոյ զան-
ձերէդ: Կը փառաւորեմ քեզ եւ ամբողջ
սրտովս գոհութիւն կը յայտնեմ, միշտ
եւ ամէն բանի համար, եւ ամէն բանէ
աւելի կը խնդրեմ, որ քու արքայու-
թիւնդ, արդարութիւնդ եւ իմաստու-
թիւնդ շնորհես ինծի, որպէսզի կարե-
նամ լաւապէս մատակարարել ձրիօրէն
քու տուած պարգեւներդ, կանուխէն
խորհելով եւ պատրաստուելով ապա-
գայ ձախորդութեանց, եւ ըստ այնմ
յօժարակամ ուրախութեամբ կարօտ-
եալներուն տամ ինչ՝ որ պէտք է իրենց,
ինչպէս դուն կը բաւարարես իմ բոլոր
պէտքերս: Կ'աղաչեմ, քու բարի պար-
գեւներովդ հետ միասին, նաեւ խո-
նարհ, հեզ եւ գթասիրտ հոգի մը տուր
ինծի, որպէսզի քու կամքիդ եւ սուրբ
սուրբ օրէնքիդ համաձայն ապրիմ, եւ
նոյնիսկ երբ ձախորդութեան եւ չքա-
ւորութեան, վիշտերու եւ տագնապնե-
րու մատնուիմ, կարենամ տոկալ եւ
կրել քաջութեամբ, անտրտունջ եւ
գոհունակ սրտով, միշտ շնորհակա-
լութիւն յայտնելով քու սուրբ կամքիդ
համար. որովհետեւ քեզմէ՛ է ամէն
բան, եւ դո՛ւն է որ կը հատուցանես,
մեր գործերուն եւ մտածողութեան հա-
մաձայն: Քեզի փառք յաւիտեանս:
Ամէն: